ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Ն «ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/46»

ք. Երևան «31» 05 2018 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, մի կողմից, և «Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն՝ Վ. Մարկոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գրականության հրատարակման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Պահանջել կատարելու մակետի հաստատման փուլում որոշակի հիմնավորված փոփոխություններ ձևավորման աշխատանքում.

բ) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

գ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում

թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Գրքի հանրայնացմանն ուղղված բոլոր միջոցառումներում. (շնորհանդես, հոբելյանական երեկո, մամուլի ասուլիս, մամուլի հաղորդագրություն և այլն) պարտադիր հրապարակել ՀՀ մշակույթի նախարարության կողմից ֆինանսավորված լինելու և պետական պատվերով հրատարակված լինելու հանգամանքը:

2.4.3. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտին հաջորդող 3 տարիների ընթացքում պատվիրատուի կողմից հավելյալ տպագրություն պատվիրելու դեպքում այն իրականացնել միայն տպագրական աշխատանքի համար պահանջվող արժեքով՝ բացառելով հրատարակչական մասը:

2.4.4 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.5 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը կամ դրա մի մասը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը 2 օրինակ (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (հավելված N 3):

3.1.1 Աշխատանքի փուլը (մակետի հանձնում) Կատարողի կողմից ներկայացվում է Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ժամկետներում՝ Պատվիրատուին ուղարկելով հրատարակության մակետը (ները), կատարված Աշխատանքի փուլի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (Հավելված N 3) և Աշխատանքի փուլի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը 2 օրինակ (Հավելված N 3.1):

3.1.2 Աշխատանքն ամբողջությամբ Կատարողի կողմից ներկայացվում է Պատվիրատուի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված վերջին ժամկետում՝ Պատվիրատուին ներկայացնելով տպագրված հրատարակության օրինակը (ները), կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը 2 օրինակ (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Սահմանված ժամկետում պատվիրատուի կողմից Աշխատանքի նմուշը ընդունվելու դեպքում Կատարողը իր միջոցներով 10 աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքն ամբողջությամբ տեղափոխում և հանձնման-ընդունման արձանագրությամբ փոխանցում է «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ին: «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի կողմից ստորագրված հանձնման-արձանագրությունը ստանալուց հետո Պատվիրատուի ներկայացուցիչը 5 աշխատանքային օրվա ընթացքում կնքում և Կատարողին է փոխանցում Աշխատանքի հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու դեպքում՝ պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 3 100 000 (երեք միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման

ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենքով սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում

գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ»

բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն	«Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան	Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2,
փող.3 Կառավարական տուն 2,	հեռ. 52-06-46,
հեռ. 58-31-96, 58-51-78	Էլ. փոստ tigranmets2002@yahoo.com
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862	ՀՎՀՀ 02505322, հ/հ N 24000100555200
ՀՀ ֆինանսների նախարարության	«Յուրիքանչ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչությունում	
Ս. Մուրադյան	Վ. Մարկոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
« 31 » 05 2018 թ. կնքված
«ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/46» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման		
							հասցեն	ժամկետը*	
								Աշխատանքի փուլի	Աշխատանքն ամբողջությամբ
1	79971100-3	**1. Աշխատանքի անվանումը՝** Գայանե Առաքելյան «Անդրանիկ Քոչարի յուսանկարչական արվեստը» գրքի հրատարակման աշխատանքների ծեռքբերում **2. Գնվող աշխատանքի էության համառոտ նկարագրությունը** Գրքում Անդրանիկ Քոչարի արվեստի շուրջ նորարարական վերլուծություններ են կատարվում: **3. Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը** **3.1 Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 70 x 100 1/12 Միջուկի չափը՝ 24 x 22,5 սմ (+ - 1 սմ) Ծավալը՝ 12 տպագր. մամուլ (144 էջ) (առնվազն) Տպաքանակը՝ 200 օրինակ **3.2 Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ կավճապատ Կշիռը՝ 130 գ/ք.մ Անթափանցելիության նվազագույն չափը՝ 90% (ISO2471) **3.3 Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 10-12 Միջտողային հեռավորությունը՝ 1.2-1.5 Օգտագործվող տառատեսակը՝ GHEA Mariam Գույների քանակը՝ 1+1 Շապիկը՝ 300 գրամ կավճապատ	դրամ	3000	600000	200	Ք. Երևան, Տերյան 72	20.06.2018 թ.	20.10.2018 թ.

		Տպագրության տեսակը՝ օֆսեթ: Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները: **4. Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա** Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին, Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն: **5. Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը** 5.1 Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը՝ 12.0 տպագրական մամուլ: 5.2 Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերադարձնում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում:							
2	79971100-3	**1. Աշխատանքի անվանումը՝** Արտավազդ Փելեշյան «Իմ աշխարհը և դաշտի միասնական տեսությունը» (անգլերեն) գրքի հրատարակման աշխատանքների ձեռքբերում **2. Գնվող աշխատանքի էության համառոտ շարադրանքը** Գրքում ներկայացվում է ականավոր ռեժիսորի տեսական, գեղագիտական հայացքների համակարգը: **3. Աշխատանքի համար անհրաժեշտ չափորոշիչների նկարագրությունը** **3.1 Ընդհանուր բնութագրիչներ՝ այդ թվում** Չափը՝ 70 x 100 1/16՝ Միջուկի չափսը՝ 21 x 36 սմ (+ - 1 սմ) Ծավալը՝ 13 տպագր. մամուլ (208 էջ) (առնվազն) Տպաքանակը՝ 500 օրինակ **3.2 Միջուկի թղթի բնութագրիչները՝ այդ թվում** Տեսակը՝ օֆսեթ Կշիռը՝ 80գ/ք.մ Ճերմակության առավելագույն չափը՝ ISO 2470/%D65 ստանդարտով (առավելագույնը՝ 96%) Անթափանցիկության նվազագույն չափը՝ 90% (ISO2471) **3.3 Տեքստի բնութագրիչներ՝** Բուն տեքստի տառաչափը՝ 10-12	դրամ	5000	2500000	500	Ք. Երևան, Տերյան 72	20.06.2018 թ.	20.08.2018 թ.

		Միջտողային հեռավորությունը՝ 1.2-1.5 Օգտագործվող տառատեսակը՝ Ghabuzian Koryun Շապիկը՝ N 7 Գույների քանակը՝ 1+1 Տպագրության տեսակը՝ օֆսետ: Պահպանել լուսանցքների համար ընդունված չափանիշները: **4. Աշխատանքի որակական ցուցանիշները՝ հիմնված ՀՀ կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա** Հրատարակության տպագրությունը պետք է լինի որակյալ, վրիպակներից զերծ և համապատասխանի ГОСТ 4.482-87, 7.4-95,7.53-01, ՀՍՏ 311-09 չափանիշներին. Հրատարակության 1 տպագրական մամուլում (միջին հաշվով) վրիպակների քանակը 3-ից ավելի լինելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել ընդունել այն: **5. Աշխատանքի հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը** 5.1 Աշխատանք կատարողը պատվիրատուին է ներկայացնում հրատարակության մակետը՝ 13.0 տպագրական մամուլ: 5.2 Հրատարակության անորակ օրինակները կատարողը վերահրատարակում է իր հաշվին՝ 10-օրյա ժամկետում:							

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2,
հեռ.՝ 58-51-96, 58-51-78
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

Ա. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2,
հեռ. [illegible] 06 46,
Էլ. փոստ՝ tigranmets2002@yahoo.com
ՀՎՀՀ 02505322, հ/հ N 24100100555200
«Յունիբանկ» ՓԲԸ

Լ. Մարկոսյան

Կ.Տ

Հավելված թիվ 2

« 31 » 05 2018 թ. կնքված

«ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/46» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79971100-3	Գայանե Առաքելյան «Անդրանիկ Քոչարի լուսանկարչական արվեստը»	0	0	0	0	0	360000	600000	600000	600000	600000	600000	600000	**600000**
2	79971100-3	Արտավազդ Փելեշյան «Իմ աշխարհը և դաշտի միասնական տեսությունը» (անգլերեն)	0	0	0	0	0	1500000	2500000	2500000	2500000	2500000	2500000	2500000	**2500000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող.3 Կառավարական տուն 2,
հեռ.՝ ~~58-51-36,~~ 58-51-78
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862
ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2,
հեռ.՝ 52-06-46,
էլ. հասցե՝ [illegible]002@yahoo.com
ՀՎՀՀ 02505322, հ/հ [illegible]100100555200
«[illegible]» ՓԲԸ

Ա. Մարկոսյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 3

« 31 » 05 2018 թ. կնքված

«ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/46» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2,
հեռ.՝ 52-06-46,
Էլ.-փոստ՝ tigranmets2002@yahoo.com
ՀՎՀՀ 02505322, հ/հ N 24100100555200
«Յունիբանկ» ՓԲԸ:

Պատվիրատու
ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան
փող.3 Կառավարական տուն 2,
հեռ.՝ 58-51-96, 58-51-78
ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011012862
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված թիվ 3.1

« 31 » 05 2018 թ. կնքված

«ՀՀՄՆ-ՄԱԱՇՁԲ-18/46» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԵՂԻՆԱԿԱՑԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 22.05.2018 թ.

«Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ-ն, որն ներկայացնում է Պատվիրատու, որը գործում է համաձայն կանոնադրության, ի դեմս գլխավոր տնօրեն Վ. Մարկոսյանի, մի կողմից, և հեղինակ Գ. Առաքելյանի, այսուհետև Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1.Կատարողը Պատվիրատուին է տրամադրում «Անդրանիկ Քոչարի լուսանկարչական արվեստը» գրքի հրատարակման իրավունքները:

1.2.Ստեղծագործության օգտագործման բացառիկ եղանակի համար հեղինակային իրավունքի իրավատիրոջ (Պատվիրատուի) թույլտվությունը պարտադիր է:

2. Կողմերի պարտավորությունները

2.1.Պատվիրատուն պարտավոր է.

2.1.1.Կատարողին, որպես հոնորար՝ 100 հատ գիրք, եթե այլ պայմաններ նախատեսված չեն կողմերի միջև:

2.1.2.Գիրքը տպագրել - 200 օրինակի պատրաստում:

2.1.3.Գրավոր տեղեկացնել Կատարողին, եթե անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ մտցնել բնագրում:

2.1.4.Ապահովում է գրքի հրատարակչական և պոլիգրաֆիական որակյալ լույս ընծայումը:

2.1.5.Կատարողը պարտավոր է.

2.1.6.Բնագիրը Պատվիրատուին հանձնել վերջնական տեսքով (փոփոխություններ չկատարելու պայմանով), պայմանագրի կնքման պահից չորս ամսվա ժամկետում:

3. Այլ պայմաններ

3.1.Պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկու կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև գրքի լույս ընծայման պահը:

3.2.Կողմերի միջև վիճելի հարցերը լուծվում են համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ	Գայանե Առաքելյան
հասցե՝ ք. Երևան,Արշակունյաց 2	անձնագիր՝ AH0642905 տրվել է 001-ի կողմից
[illegible] Մարկոսյան	հասցե՝ ք. Նոր Հաճն, Իսահակյան փ. 3 շ.,բն.38

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 22.05.2018 թ.

«Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ-ն, այսուհետև Պատվիրատու, որը գործում է համաձայն կանոնադրության, ի դեմս գլխավոր տնօրեն Վ. Մարկոսյանի, մի կողմից, և հեղինակ Ա. Փելեշյանի, այսուհետև Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1.Կատարողը Պատվիրատուին է տրամադրում «Իմ աշխարհը և դաշտի միասնական տեսությունը» անգլերեն գրքի հրատարակման իրավունքները:
1.2.Ստեղծագործության օգտագործման յուրաքանչյուր եղանակի համար հեղինակային իրավունքի իրավատիրոջ (Պատվիրատուի) թույլտվությունը պարտադիր է:

2. Կողմերի պարտականությունները

2.1.Պատվիրատուն պարտավոր է.
2.1.1.Կատարողին, որպես հոնորար՝ 100 հատ գիրք, եթե այլ պայմաններ նախատեսված չեն կողմերի միջև:
2.1.2.Գիրքը տպագրել - 500 օրինակի պատրաստում:
2.1.3.Գրավոր տեղեկացնել Կատարողին, եթե անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ մտցնել բնագրում:
2.1.4.Ապահովում է գրքի հրատարակչական և պոլիգրաֆիական որակյալ լույս ընծայումը:
2.1.5.Կատարողը պարտավոր է.
2.1.6.Բնագիրը Պատվիրատուին հանձնել վերջնական տեսքով (փոփոխություններ չկատարելու պայմանով), պայմանագրի կնքման պահից չորս ամսյա ժամկետում:

3. Այլ պայմաններ

3.1.Պայմանագիրը ուժի մեջ է մտնում երկու կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև գրքի լույս ընծայման պահը:
3.2.Կողմերի միջև վիճելի հարցերը լուծվում են համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ
գլխավոր տնօրեն Վ. Մարկոսյան
հասցե՝ [redacted]
կ.[redacted]

ԿԱՏԱՐՈՂ

Արտավազդ Փելեշյան

հասցե՝ ք. Երևան,Արզումանյան 28շ.,բն.12

անձնագիր՝ AN 0293388 տրվել է 001-ի կողմից